

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» «_____» 2022թ.

N ___-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին կետի 20-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) Մշակույթի և տուրիզմի վարչություն».

2) Որոշման N 2 հավելվածում.

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մշակույթի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Մշակույթի և տուրիզմի վարչություն					
1	Վարչության պետ	1	697000		697000
2	Վարչության պետի տեղակալ	1	561000		561000
Մշակույթի բաժին					
3	Բաժնի պետ	1	408000		408000
4	Գլխավոր մասնագետ	4	289000		1156000
5	Առաջատար մասնագետ	2	282200		564400
Տուրիզմի բաժին					
6	Բաժնի պետ	1	408000		408000
7	Գլխավոր մասնագետ	2	289000		578000
8	Առաջատար մասնագետ	1	282200		282200
Ընդամենը		13			4654600

»,

բ. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ձորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն» գլխի «քաղաքացիական պաշտպանության բաժին» բաժները փոխարինել «արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժին» բաժներով,

գ. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Հանրակրթության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հանրակրթության վարչություն					
1	վարչության պետ	1	697000		697000
2	վարչության պետի տեղակալ	2	561000		1122000

3	գլխավոր մասնագետ	8	323000		2584000
4	առաջատար մասնագետ	4	289000		1156000
5	առաջին կարգի մասնագետ	3	282200		846600
	Ընդամենը	18			6405600

»

դ. ուժը կորցրած ճանաչել «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առողջապահության վարչություն» գլխի 2-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «11» և «4,212,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «10» և «3,964,400» թվերով,

ե. ուժը կորցրած ճանաչել «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն» գլխի 9-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «14» և «4,834,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «13» և «4,586,600» թվերով,

զ. ուժը կորցրած ճանաչել «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն» գլխի 4-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «24» և «8,122,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «23» և «7,874,400» թվերով,

է. ուժը կորցրած ճանաչել «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն» գլխի 2-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «16» և «5,314,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» և «5,066,000» թվերով,

3) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «707.5» և «234,696,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «698.5» և «232,577,800» թվերով,

4) «Ամբողջը» տողում «1997.5» և «607,788,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «1988.5» և «605,670,000» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում

համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է մշակույթի ոլորտում ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից բխող գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության (այսուհետ՝ Վարչություն) ներուժի օպտիմալ օգտագործման, Վարչության բաժինների կողմից իրականացվող գործառույթների կրկնությունը բացառելու անհրաժեշտությունից ելնելով:

Վարչության ներկայիս կառուցվածքը սահմանվել է Երևան քաղաքի ավագանու 2019թ. հունիսի 17-ի հ.104-Ա որոշմամբ, որի համաձայն՝ Վարչության կազմում գործող մշակույթի բաժնի գործառույթները տարանջատվել են մշակութային կազմակերպությունների համակարգման և մշակութային միջոցառումների իրականացման ուղղություններով՝ ձևավորելով համապատասխանաբար մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող և մշակութային միջոցառումների համակարգման և վերահսկման բաժինները:

Վարչության կազմում մշակութային միջոցառումների համակարգման և վերահսկման բաժնի ստեղծումը հիմնավորվել է Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող մշակութային միջոցառումների կազմակերպման գործընթացները պատշաճ իրականացնելու, մշակութային միջոցառման պլանավորման, բովանդակության մշակման, կազմակերպման և վերահսկման ամբողջական շղթան մեկ օղակում կենտրոնացնելու նպատակահարմարությամբ, ինչը, փաստացի չի արդարացրել նախանշված սպասումները:

Ավելին, Վարչության ուժեղացված հաստիքացանկը ներկայում խոչընդոտում է արդյունավետ գործունեությանն ու ռեսուրսների օպտիմալ օգտագործման ուղղությամբ իրականացվող ծրագրերին՝ լրացուցիչ բեռ հանդիսանալով համայնքային բյուջեի համար:

Վերոգրյալ խնդիրը պայմանավորված է բաժնին վերապահված հիմնական գործառույթի՝ միջոցառման բովանդակության մշակման նեղ մասնագիտական (ստեղծագործական) բնույթով: Մասնավորապես, մշակութային միջոցառման բովանդակության (կոնտենտի) մշակումը (միջոցառման թեմատիկ ուղղության սահմանում, մասնակիցների ընտրություն, իրականացվող մշակութային քաղաքականության և առկա պահանջարկի զուգորդմամբ միջոցառման թիրախային խմբերի զատորոշում և պլանավորում, անհրաժեշտ տեխնիկական միջոցների

սահմանում և այլն) խիստ սպեցիֆիկ գործառույթ է և պահանջում է համապատասխան մասնագիտական ու ստեղծագործական բնույթի կարողություններ, որի համար բաժինը պետք է համալրված լինի համապատասխան փորձ և ստեղծագործական ձիրք ունեցող աշխատակիցներով: Վարչարարության և համայնքային ծառայությունից բխող պարտականությունների ու ստեղծագործական աշխատանքի տարբեր, գործնականում անհամատեղելի բնույթներով պայմանավորված՝ նախորդող 3 տարիների ընթացքում չի հաջողվել բաժինը համալրել համապատասխան կարողություններ ունեցող կադրերով: Բաժինը այս ընթացքում իրականացրել է միայն մշակութային միջոցառումների կազմակերպական աշխատանքների որոշակի մի մասը (գնումների գործընթաց, հաշվետվությունների ներկայացում և այլն), ինչը կարող է իրականացվել առանց հավելյալ հաստիքների ներգրավման՝ Վարչության առաջարկվող կառուցվածքի պարագայում:

Վերոգրյալից բացի, մշակութային միջոցառման բովանդակության մշակումը որոշակի առումով պարունակում է սուբյեկտիվ մոտեցման տարրեր (ճաշակ, աշխարհայացք և այլն), ինչը ռիսկային է դարձնում գործընթացի մասնակցայնությունն ու թափանցիկությունը: Այդ պատճառով, ստեղծագործական բնույթի գործառույթներն առավել նպատակահարմար է համարվում պատվիրակել/հանձնարարել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին և անհատներին:

Ներկայացված առաջարկությամբ՝ պլանավորված յուրաքանչյուր մշակութային միջոցառման բովանդակության մշակմանը կկարողանան մասնակցել տարբեր կազմակերպություններ և անհատներ, իսկ վերջիններիս կողմից ներկայացված աշխատանքները կընտրվեն մրցութային կարգով: Լավագույն առաջարկությունների ընտրության համար կգործի համապատասխան հանձնաժողով, որում կարող են ընդգրկվել հեղինակավոր մասնագետներ: Մրցութային կարգով ընտրված (հաղթող ճանաչված) հայտ-առաջարկության հեղինակ կազմակերպությունը/անհատը կատարված աշխատանքի դիմաց կստանա վարձատրություն՝ բյուջեում հատուկ այս նպատակով նախատեսված ֆինանսական միջոցների չափով, իսկ հաղթող ճանաչված հայտի հիման վրա կկազմակերպվի միջոցառման կազմակերպման ծառայությունների գնման գործընթացը և կիրականացվեն դրանից բխող հետագա գործառույթները:

Նախագծի հաստատմամբ՝ «Մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող» և «Մշակութային միջոցառումների համակարգման և վերահսկման» բաժինները կմիավորվեն մեկ՝ «Մշակույթի» բաժնում՝ 7 հաստիքային միավորով, որը կգործի հետևյալ հաստիքացանկով՝ բաժնի պետ, 4 գլխավոր մասնագետ, 2 առաջատար մասնագետ: Բացի այդ, առաջարկվում է վերանայել վարչության տուրիզմի բաժնի հաստիքացանկը, և ի հաշիվ առաջատար մասնագետի 1 հաստիքի՝ ավելացնել բաժնի գլխավոր մասնագետների թիվը (բաժնի պետ, 2 գլխավոր և 1 առաջատար մասնագետ): Նախագծով առաջարկվում է նաև Վարչության գլխավոր մասնագետի հաստիքը ներառել մշակույթի բաժնի հաստիքացանկում:

Նախագծի ընդունման արդյունքում վարչության հաստիքացուցակը ներկայում գործող 18 միավորի փոխարեն կսահմանվի 13 միավոր, որը հնարավորություն կընձեռի համայնքային բյուջեից խնայել տարեկան ավելի քան 18 մլն ՀՀ դրամ:

Ի հավելումն վերոգրյալի՝ Նախագծով առաջարկվում է վարչությունը վերանվանել «Մշակույթի և տուրիզմի վարչություն»՝ հաշվի առնելով վարչության կողմից իրականացվող գործառույթների ճշգրիտ-բովանդակային և ամբողջական արտացոլման, ինչպես նաև քաղաքապետարանից դուրս, արտաքին հարթակներում /հարաբերություններում/ վարչության պատշաճ ներկայացուցչականության ապահովման անհրաժեշտությունը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ջորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության բաժնի գործունեությունը ըստ վարչության կանոնադրության նախատեսված է ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության կազմակերպմանը: Սակայն առօրյա գործունեության ընթացքում բաժինը զբաղվում է այնպիսի գործառույթներով, որոնք առնչվում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը, մասնավորապես՝ հրդեհների կանխագելում, սեյսմիկ ռիսկի նվազեցում, արտակարգ իրավիճակներում բնակչության ուսուցում և այլն:

Նման մոտեցումը արդարացված է, քանի որ Երևանի քաղաքապետարանը ունի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման խնդիրներ և չունի համապատասխան ստորաբաժանում:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ կատարել «Ջորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության բաժնի» անվանափոխություն նշելով հետևյալը՝ «Ջորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժին», կատարել վարչության կանոնադրության և բաժնի անձնակազմի պաշտոնի անձնագրերի մեջ փոփոխություններ, ներառելով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կանխարգելիչ և հիմնական միջոցառումների գործառույթներ:

2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան կազմակերպության աջակցությամբ բազմամասնագիտական փորձագիտական խումբն իրականացրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության գործառույթների վերլուծություն: Ուսումնասիրությունը նպատակ է ունեցել իրականացնել վերլուծություններ, բացահայտել խնդիրներ և ներկայացնել կառավարման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Ներկայացվող կառուցվածքային փոփոխության նպատակն է՝ նվազեցնելու Վարչության գործունեությանն առնչվող համակարգային և առօրյա աշխատանքներին խոչընդոտող խնդիրները, ինչպես նաև նպաստելու զարգացման և նորարարական մոտեցումների արդյունավետ իրագործմանը:

Մասնավորապես, ուղղահայաց հիերարխիան հնարավորություն չի տալիս համաժամանակյա և արդյունավետ մշտադիտարկում իրականացնել, ինչն իր հերթին

հանգեցնում է աշխատանքների ոչ արդյունավետ իրականացմանը, վերահսկողության խոչընդոտմանը, մինչդեռ արդի կառավարման մոտեցումները պահանջում են ճկունություն և միջոցառումների հասցեականություն: Թիրախային և հասցեական մոտեցումների ներդրման համար անհրաժեշտ է անցում կատարել ծրագրային կառավարման համակարգերին և մատրիցային շրջանակների կիրառմանը:

Առաջարկվող համակարգը հնարավորինս բացառելու է գործառույթների կրկնություն, ինչպես նաև կանոնակարգվելու են լիազորություններով սահմանված, բայց ներկայումս թերի իրականացվող գործառույթները, լիազորությունների շրջանակից դուրս իրականացվող աշխատանքները:

Առաջարկվող փոփոխություններով, ի թիվս այլ կազավորումների, կիրականացվի նաև պաշտոնի անձնագրերով նախատեսված և աշխատակիցների կողմից իրականում կատարվող աշխատանքների համապատասխանեցում: Առաջարկվում է Վարչության գործառույթները աշխատակիցների միջև բաշխել ըստ պարտականությունների, որի նպատակն է անձնակազմի թիրախային ընտրությունը, պարտականությունների հստակեցումը, իրականացվող աշխատանքների կրկնությունների բացառումը:

Նախագծով նախատեսվում է հասնել ներքին և արտաքին հաղորդակցության ուղիների արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, հնարավորություններ կստեղծվի նվազեցնել զանգերի, բողոքների սպասարկման վրա ծախսվող մեծ ռեսուրսները՝ ապահովելով հանրությանը ժամանակին, ճշգրիտ և բավարար տեղեկատվության տրամադրումը, արդյունավետ հաղորդակցման մեթոդների և գործիքների ներդրումը, որի արդյունքում ակնկալվում է զանգերի քանակի նվազեցում, տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը:

Առաջարկվող կառուցվածքով ակնկալվում է Վարչությունում ստեղծել աշխատանքի ամենօրյա բարելավում և զարգացում: Մասնավորապես, մշտադիտարկման համակարգի ներդրումը, տեղեկատվության հավաքագրման ընդհանուր համակարգի ստեղծումը, գործառույթների բացառումը և այլն:

Հանրակրթության վարչության կառուցվածքային փոփոխության հիմքում անցումն է գործառութային բաշխմանը: Նախագծով առաջարկվում է վարչության աշխատանքները կազմակերպել և իրականացնել, չտարանջատելով բաժինների, զուգահեռաբար հզորացնելով վարչության պետի տեղակալների ինստիտուտը:

Ներկայումս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության կազմում գործում է երկու բաժին: Վարչության գործառույթների իրականացումը գործող կառուցվածքով չի նպաստում գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հաճախ այն խնդիրները, որոնք ենթադրաբար պետք է լուծում գտնեն բաժինների մակարդակում, բարձրացվում են վարչության պետի մակարդակ: Բացի այդ, բաժինների առկայության դեպքում անցումը գործառութային բաշխման առավել բարդ և ծախսատար է, քանի որ մի շարք գործառույթներ ունեն ընդհանուր բնույթ կամ կրկնվող են, օրինակ՝ տվյալների հավաքագրումը, բազաների ստեղծումը, ԿԳՄՍՆ և այլ կառույցներից շրջաբերականների մշակումն ու փոխանցումը, քաղաքացիներին իրավական դրույթներից բխող ընդհանուր տեղեկատվության

փոխանցումը և այլն: Գործառուօթային բաշխման պարագայում և բաժինների առկայության դեպքում ընդհանուր բնույթի գործառույթները, օրինակ՝ տվյալների հավաքագրում և վերլուծություն, մեթոդական հենքի մշակում և այլն պետք է ստեղծվեն երկու բաժիններում, այն դեպքում, երբ վարչության պետի երկրորդ տեղակալի հաստիքի ներդրմամբ դրանք կմեկտեղվեն:

Վարչության ներկայիս կառուցվածքը ենթադրում է եռաստիճան հիերարխիա՝ վարչության պետ, վարչության պետի տեղակալ, բաժինների պետեր: Վարչության հաստիքացուցակն ընդգրկում է 18 հաստիք, որից 4-ը՝ այն է՝ 23%-ը՝ ղեկավարներ են: Հեղինակավոր կազմակերպությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկա իրողություններում (համակարգչային հագեցվածություն, ավտոմատ համակարգերի առկայություն, տեղեկատվական հոսքերի կառավարման ծրագրային ապահովումներ և այլն) ենթակաների օպտիմալ քանակն է մեկ ղեկավարի կտրվածքով 11-15 ենթակա: Վարչության պետ և պետի տեղակալներ կառուցվածքի պարագայում ենթակաների քանակը մեկ ղեկավարի կտրվածքով կկազմի ավելի օպտիմալ ցուցանիշ:

Ներկայումս կիրառվող խիստ ուղղահայաց կառավարման համակարգը հնարավորություն չի ընձեռում արդյունավետ իրականացնել մի շարք գործառույթներ: Առկա համակարգի պարագայում գործառուօթային բաշխումը արդյունավետ չի իրականացվում, բարդ է արդյունավետորեն կիրառել ծրագրերի կառավարման մեթոդները: Առաջարկվող կառուցվածքը հնարավորություն է տալիս տարանջատված գործառուօթային բաշխվածությանը զուգահեռ ներդնել կառավարման մատրիցային համակարգի մոտեցումներ և տարրեր՝ խթանելով առավել ճկուն, թիմային և ըստ առաջացող խնդիրների օպտիմալ, արագ լուծումներ գտնելուն:

Նկարագրված և նախագծով առաջարկվող ձևաչափը լիովին համապատասխանում է վարչության առաքելությանը՝ նկատի ունենալով, որ կանոնադրական նպատակների իրականացման շրջանակում վարչությունն ունենալու է ինչպես ընթացիկ, այնպես էլ ծրագրային բնույթի աշխատանքներ:

Վարչության կառուցվածքի փոփոխության գործընթացին զուգահեռ իրականացվելու է աշխատակիցների կարողությունների զարգացման ծրագիր, որպեսզի փոփոխության դեպքում գործող աշխատակազմը կարողանա ադապտացվել փոփոխված կառուցվածքին: Աշխատակիցները կվերապատրաստվեն անհրաժեշտ կոմպետենցիաներով, որի համար նախապես կկատարվի կարիքի գնահատում տվյալ աշխատակցի համար, և կմշակվի անհատական զարգացման պլան, որի հիման վրա էլ կկազմակերպվեն դասընթացները:

Նախագծի 2-րդ մասի դ-է) ենթակետերով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում նոր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի (Mulberry) ներդրմամբ, ինչպես նաև նշված հաստիքային միավորների թափուր լինելու հանգամանքով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևանի բյուջեում ծախսերի և եկամուտների էական փոփոխություններ չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ